



Ի՞նչ է պատահում համապատասխանության վերահսկման իմ հայտին

1. Խումբը սկզբում գրանցում է Ձեր խմբի ներկայացրած՝ համապատասխանության վերահսկման հայտը իր ինտերնետային էջին, Ձեր խմբին համապատասխան ծանուցում է ուղարկում նամակը ստանալուց հետո յոթ օրվա ընթացքում և տեղեկացնում է ԱԶԲ Տնօրենների խորհրդին:
2. Այնուհետև Խումբը որոշում է, թե արդյոք Ձեր հայտն ընդունել է համապատասխանության վերահսկման իրականացման համար և իր ուսումնասիրությունների արդյունքներն ու առաջարկություններն է ներկայացնում Խորհրդին՝ հայտի գրանցումից հետո 14 օրվա ընթացքում (21 օր, եթե Ձեր խումբը համապատասխանության վերահսկման հայտ է ներկայացրել Հատուկ ծրագրի հաշտարարի կողմից Ձեր բողոքի մերժումից հետո):
3. Տնօրենների խորհուրդը այնուհետև Խմբի առաջարկությունները ստանալուց հետո 21 օրվա ընթացքում որոշում է, թե արդյոք հայտը համապատասխանում է ընդունելիության բոլոր պահանջներին և դրական որոշման դեպքում Խորհուրդը լիազորում է համապատասխանության վերահսկողությունը:
4. Խումբը սկսում է իր վերահսկողությունը, ձևակերպում աշխատանքի նկարագիրը և դրա կատարման ժամկետները Խորհրդի կողմից լիազորվելուց հետո 14 օրվա ընթացքում, իրականացնում հետաքննություն, այցելություններ տեղերում, հարցազրույցներ ունենում շահառուների հետ, մշակում է զեկույցի նախագիծ և այն ներկայացնում Ձեր խմբին և ԱԶԲ կառավարման օղակին՝ դիտողությունների համար:
5. Ձեզանից և ԱԶԲ-ից դիտողություններ/պատասխաններ ստանալուց հետո 14 օրվա ընթացքում Խումբը իր վերջնական զեկույցն է ներկայացնում Խորհրդին՝ թերությունների վերացման գործողությունների առաջարկություններով:
6. Խորհուրդն այնուհետև որոշում է կայացնում Խմբի վերջնական զեկույցը ստանալուց հետո 21 օրվա ընթացքում:
7. Խումբն այնուհետև վերահսկում է Խորհրդի կողմից հավանության արժանացած՝ թերությունների վերացման գործողությունների իրականացումը:

Համապատասխանության վերահսկման խումբը



Ռուդիան Լուրիս Նախագահ



Անտոնիո Լա Վինա
Կես դրույթով աշխատող անդամ



Անն Դերույթերե
Կես դրույթով աշխատող անդամ

առնվազը 5 տարվա ընթացքում երաշխավորելու դրանց ժամանակին և պատշաճ կատարումը ԱԶԲ-ի կողմից:

Եթե ցանկանում եք ավելին իմանալ Խորհրդատվական փուլի մասին, դիմեք՝

Հատուկ ծրագրի հաշտարարին
Ասիական զարգացման բանկ
6 ADB Avenue, Mandaluyong City
1550 Metro Manila, Philippines
Հեռ.՝ +63 2 632 4825
Ֆաքս՝ +63 2 636 2490
spf@adb.org
www.adb.org/spf

Համապատասխանության վերահսկման փուլի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու նպատակով կարող եք դիմել՝

Համապատասխանության վերահսկման խմբի քարտուղարին
Ասիական զարգացման բանկ
6 ADB Avenue, Mandaluyong City
1550 Metro Manila, Philippines
Հեռ.՝ +63 2 632 4149
Ֆաքս՝ +63 2 636 2088
crp@adb.org
www.compliance.adb.org

ԱԶԲ մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝
www.adb.org

ՀԱՇՎԵՏՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ



Ասիական զարգացման բանկ

Համապատասխանության վերահսկման խումբ



Ի՞նչ է ԱԶԲ-ի հաշվետողականության մեխանիզմը

2003թ. Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ) ստեղծեց Հաշվետողականության մեխանիզմ՝ Տեսչության գործառույթը փոխարինելու և մի անկախ հարթակ ապահովելու նպատակով, որտեղ մարդիկ, ում վրա բացասաբար են ազդել ԱԶԲ-ի օժանդակությամբ իրականացված ծրագրերը, կարողանան բարձրաձայնել և լուծել իրենց խնդիրները և զեկուցել ԱԶԲ-ի գործառնական քաղաքականությանն ու ընթացակարգերին ԱԶԲ-ի ենթադրելի անհամապատասխանության մասին: Մեխանիզմն ունի երկու փուլ. Խորհրդատվական փուլ և համապատասխանության վերահսկման փուլ:

Ի՞նչ է համապատասխանության վերահսկումը

Համապատասխանության վերահսկման փուլը մեխանիզմի երկրորդ փուլն է։ Համապատասխանության վերահսկումը ԱԶԲ օժանդակությամբ իրականացվող ծրագրի ձևակերպման, մշակման և իրականացման ժամանակ ԱԶԲ գործառնական քաղաքականություններին և ընթացակարգերին ԱԶԲ-ի անհամապատասխանության մասին հաշվետվությունների ուսուճասիրման մի գործընթաց է։ Այս գործընթացը վերաբերում է պետական և մասնավոր հատվածներում ԱԶԲ ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերին։

Համապատասխանության վերահսկման փուլն իրականացնում է Համապատասխանության վերահսկման խումբը։ Նախքան համապատասխանության վերահսկողություն իրականացնելու մասին Ձեր հայտի ներկայացնելը Դուք պետք է նախևառաջ անցնեք Խորհրդատվական փուլով՝ Հատուկ ծրագրի հաշտարարին բողոք ներկայացնելով։ Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝ visit www.adb.org/spf :

Ի՞նչ է Համապատասխանության վերահկման խումբը

Համապատասխանության վերահսկման խումբը մի անկախ մարմին է, որը նշանակվում է ԱԶԲ-ի Տնօրենների խորհրդի կողմից։ Խումբը կազմված է երեք անդամից՝ մեկ լրիվ դրույքով նախագահից և երկու կես դրույքով աշխատող անդամներից։ Խմբի երկու անդամերը ԱԶԲ-ի ռեզիդնալ անդամ երկրներից են։ Երրորդը պետք է լինի զարգացող անդամ երկրից, խմբի երրորդ անդամը ընտրվում է ԱԶԲ ոչ ռեզիդնալ անդամ երկրից։

Ո՞վ կարող է դիմել համապատասխանության վերահսկման համար

Եթե Դուք կամ ձեր համայնքից կամ գյուղից այլ անդամեր զգում եք, որ փասս եք կրում, կամ վստահ եք, որ փասս եք կրելու ԱԶԲ օժանդակությամբ իրականացվող ծրագրի պատճառով և որ այս փասսը պատճառվել է ԱԶԲ օժանդակությամբ իրականացվող ծրագրի ձևակերպման, մշակման և իրականացման ժամանակ ԱԶԲ գործառնական քաղաքականություններին և ընթացակարգերին ԱԶԲ-ի

Համապատասխանության վերահսկման խումբն անկախ մարմին է, որը նշանակված է ԱԶԲ Տնօրենների խորհրդի կողմից։

Եթե Դուք և այլ մարդիկ Ձեր համայնքում կամ գյուղում զգում եք, որ փասս եք կրում Դուք և այլոք կարող եք Խմբի կողմից համապատասխանության վերահսկման հայտ ներկայացնել։

չհամապատասխանելու հետևանքով, ապա Դուք կամ այլոք կարող ե՞ն Խմբին համապատասխանության վերահսկման հայտ ներկայացնել։

Համապատասխանության վերահսկման հայտը կարող է ներկայացվել առնվազը երկու անձից կազմված խմբի կողմից, ովքեր բնակվում են կամ այն երկրում, որտեղ տեղակայված է ԱԶԲ օժանդակությամբ իրականացվող ծրագիրը, կամ հարևան երկրում։

Կամ համապատասխանության վերահսկման հայտը կարող է ներկայացվել Ձեր խմբի անունից՝ որևէ տեղական ներկայացուցչի կամ Ձեր համայնքից կամ գյուղից դուրս գտնվող մեկ այլ ներկայացուցչի կողմից՝ որը պատշաճ կերպով նշանակված է որպես Ձեր խմբի գործակալ։ Հատուկ դեպքերում, որոնք ներառում են լուրջ անհամապատասխանություն ԱԶԲ գործառնական քաղաքականություններին և ընթացակարգերին, ԱԶԲ-ի Տնօրենների խորհրդի ցանկացած մեկ կամ ավելի անդամեր կարող են համապատասխանության վերահսկման հայտ ներկայացնել։

Հայտը ընդունելի է համապատասխանության վերահսկման համար եթե այն չի դասվում Խմբի աշխատանքային գործառնոյթներում ձևակերպված բացառուճներից որևէ մեկին (մատչելի են www.compliance.adb.org հասցեում)։

Համապատասխանության վերահսկման հայտ

Համապատասխանության վերահսկման հայտը պետք է ներառի հետևյալ տեղեկատվությունը՝

- Անուններ, հասցեներ և Ձեր խմբի և կամ նրա ներկայացուցչի կոնտակտային այլ տվյալներ.

- Արդյո՞ք Ձեր խումբը ցանկանում է գաղտնի պահել Ձեր ինքնությունը և դրա պատճառ(ներ)ը.

- Եթե Դուք ազդեցության ենթարկված խումբ եք ներկայացնում, ապա ներառեք այն ներկայացնելու լիազորագիր.

- Ձեզ կամ Ձեր խմբին հասցված փասսի կամ հնարավոր փասսի նկարագիրը.

- ԱԶԲ օժանդակած ծրագրի անունն ու տեղը.

- Արդյունքը կամ միջոցները, որ ըստ Ձեր խմբի պետք է տրամադրի ԱԶԲ-ն.

- Առաջինը Հատուկ ծրագրի հաշտարարին Ձեր բողոքը ներկայացնելու՝ Ձեր խմբի ջանքերի արդյունքների բացատրությունները.

- Եթե Ձեր բողոքը մերժվել է Հատուկ ծրագրի հաշտարարի կողմից, ապա բացատրություն, թե ինչու է Ձեր խումբը համապատասխանության վերահսկման հայտ ներկայացնում.

- Եթե վերոնշյալ տեղեկություններից որևէ մեկը հնարավոր չէ տրամադրել, ապա դրա պատճառ(ները).

- Ցանկացած այլ խնդիրներ կամ փաստեր՝ հիմնավորող փաստաթղթերի հետ միասին, որ Ձեր կարծիքով էական են Ձեր խմբի հայտի համար։

Համապատասխանության վերահսկման Ձեր հայտը կարող է ներկայացվել Անգլերենով կամ ԱԶԲ-ի զարգացող անդամ երկրների ցանկացած այլ պաշտոնական կամ պետական լեզվով։ Եթե հայտը ներկայացվում է ոչ անգլերեն լեզվով, ապա Խմբին թարգմանության համար լրացուցիչ ժամանակ է անհրաժեշտ։ Խումբը հայտատուների ինքնությունը գաղտնի կպահի, եթե նման խնդրանք է ներկայացվել, սակայն անանուն հայտերը չեն ընդունվի Խմբի կողմից։

Հայտը ուղարկեք փոստով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով՝
<p>Համապատասխանության վերահսկման խմբի քարտուղարին՝</p> <p>Ասիական զարգացման բանկ</p> <p>6 ADB Avenue, Mandaluyong City</p> <p>1550 Metro Manila, Philippines</p> <p>Հեռ.՝ +63 2 632 4149</p> <p>Ֆաքս՝ +63 2 636 2088</p> <p>crp@adb.org</p>

Եթե Դուք ուղարկում եք Ձեր նամակը կամ հայտը ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով, ապա պետք է նաև բնօրինակը ուղարկեք փոստով՝ վերոնշյալ հասցեով։ Դուք նաև կարող եք անձամբ բերել Ձեր նամակը կամ հայտը Մանիլայում, Ֆիլիպիններ, տեղակայված ԱԶԲ Գլխամասային գրասենյակ կամ ցանկացած ԱԶԲ ռեզիդենտ/ռեզիդնալ կամ ներկայացուցչական գրասենյակ (հասցեները և կոնտակտային այլ տվյալներ մատչելի են www.adb.org/About/contact.asp հասցեում)։